600.0034.29.11.99

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29 նոյեմբերի 1999 թվականի, № 34
քաղ. Երևան

Բնական գազի սակագների մասին

Հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի «ա» կետը և հաշվի առնելով, որ՝

- Հայաստանի Հանրապետության գազատրանսպորտային համակարգի սեփականատերը «ՀայՌուսգազարդ» ՓԲԸ-ն է,
- Հայաստանի Հանրապետությունում բնական գազի փոխադրման և բաշխման լիցենզավորված գործունեություններն իրականացնում են «ՀայՌուսգազարդ» ՓԲԸ-ի կողմից հիմնադրված «Տրանսգազ» և «Գազաբաշխիչ» ՍՊԸ-ները,
- բնական գազի փոխադրման և բաշխման լիցենզավորված գործունեությունները իրականացվում են «ՀայՌուսգազարդ» ՓԲԸ-ի սեփականություն հանդիսացող գույքային համալիրով, որը հանձնված է «Տրանսգազ» և «Գազաբաշխիչ» ՍՊԸ-ներին՝ հավատարմագրային կառավարման,
- բնական գազի որոշակի չափաքանակի ներկրումը և վաճառքը սպառողներին իրականացնում է «ՀայՌուսգազարդ» ՓԲԸ-ն,
- «ՀայՌուսգազարդ» ՓԲԸ-ի կանոնադրական հիմնադրամի համալրման նպատակով բնական գազի որոշակի չափաքանակի ներկրումը և վաճառքը իրականացնում է «Հայգազարդ» ՊՓԲԸ-ն,

ինչպես նաև ուսումնասիրելով բնական գազի վաճառքի և ծառայությունների իրականացման սակագների վերաբերյալ բնական գազի ոլորտում լիցենզավորված գործունեություն իրականացնող ընկերությունների հայտերը,

ՀՀ էներգետիկայի հանձնաժողովը **որոշում է**.

1. Սահմանել՝

1.1. Բնական գազի վաճառքի սակագինը՝

ա) ամսական մինչև 10.0 հազար նխմ սպառում ունեցող սպառողների և բնակչության համար՝ 51000 դրամ (ներառյալ ԱԱՀ)՝ սպառված յուրաքանչյուր 1000 նխմ բնական գազի դիմաց,

բ) ամսական 10.0 հազար նխմ-ից ավելի սպառում ունեցող սպառողների համար՝ 79,1 ԱՄՆ դոլարին համարժեք դրամ(ներառյալ ԱԱՀ)՝ սպառված յուրաքանչյուր 1000 նխմ բնական գազի դիմաց:

1.2. Բնական գազի փոխադրման սակագինը՝ 5.783 ԱՄՆ դոլարին համարժեք դրամ (ներառյալ ԱԱՀ)՝ փաստացի փոխադրված և բաշխողին («Գազաբաշխիչ» ՍՊԸ) ու (կամ) գազի ստորգետնյա պահեստ-կայանին հանձնված յուրաքանչյուր 1000 նխմ գազի դիմաց:

Ընդ որում՝

ա) բնական գազի փոխադրման ծառայություն իրականացնող ընկերության («Տրանսգազ» ՍՊԸ) մասնաբաժինը կազմում է 2.113 ԱՄՆ դոլարին համարժեք դրամ (ներառյալ ԱԱՀ)՝ փաստացի փոխադրված և բաշխողին («Գազաբաշխիչ» ՍՊԸ) ու (կամ) գազի ստորգետնյա պահեստ-կայանին հանձնված յուրաքանչյուր 1000 նխմ գազի դիմաց,

բ) բնական գազի փոխադրման ցանցի սեփականության իրավունքից («ՀայՌուսգազարդ» ՓԲԸ) ծագող մասնաբաժինը կազմում է 3.67 ԱՄՆ դոլարին համարժեք դրամ (ներառյալ ԱԱՀ)՝ փաստացի փոխադրված և բաշխողին («Գազաբաշխիչ» ՍՊԸ) ու (կամ) գազի ստորգետնյա պահեստ-կայանին հանձնված յուրաքանչյուր 1000 նխմ գազի դիմաց:

1.3. Բնական գազի բաշխման սակագինը՝ 6.126 ԱՄՆ դոլարին համարժեք դրամ (ներառյալ ԱԱՀ)՝ փաստացի բաշխված (վաճառված) յուրաքանչյուր 1000 նխմ գազի դիմաց:

Ընդ որում՝

ա) բնական գազի բաշխման ծառայություն իրականացնող ընկերության («Գազաբաշխիչ» ՍՊԸ) մասնաբաժինը կազմում է 4.195 ԱՄՆ դոլարին համարժեք դրամ (ներառյալ ԱԱՀ)՝ փաստացի բաշխված (վաճառված) յուրաքանչյուր 1000 նխմ գազի դիմաց,

բ) բնական գազի բաշխման ցանցի սեփականության իրավունքից («ՀայՌուսգազարդ» ՓԲԸ) ծագող մասնաբաժինը կազմում է 1.932 ԱՄՆ դոլարին համարժեք դրամ (ներառյալ ԱԱՀ)՝ փաստացի բաշխված (վաճառված) յուրաքանչյուր 1000 նխմ գազի դիմաց:

(Սակագների հաշվարկում տեխնոլոգիական կորուստներն ընդունված են հավասար՝

- գազի փոխադրման ցանցում՝ ներկրողից և (կամ) գազի ստորգետնյա պահեստ-կայանից ընդունված գազի քանակության 3.3%-ը,
- գազի բաշխման ցանցում՝ փոխադրողից ընդունված գազի քանակության 2.5%-ը):

2. Ընդունել ի գիտություն, որ սույն որոշման 1.1 կետի «ա» և «բ» ենթակետերով սահմանված սակագներում ներառված են բնական գազի ներկրման գործունեության իրականացման ծախսերը՝ 0.611 ԱՄՆ դոլարին համարժեք դրամ (ներառյալ ԱԱՀ)՝ փաստացի բաշխված (վաճառված) յուրաքանչյուր 1000 նխմ բնական գազի դիմաց:

3. Հաշվի առնելով, որ՝

- բնական գազի փոխադրման ցանցի հուսալի և անվտանգ շահագործման տարեկան նվազագույն ծախսերը կազմում են 2.108 մլն ԱՄՆ դոլարին

համարժեք դրամ (ներառյալ ԱԱՀ), իսկ բնական գազի բաշխման ցանցի հուսալի և անվտանգ շահագործման տարեկան նվազագույն ծախսերը՝ 4.762 մլն ԱՄՆ դոլարին համարժեք դրամ (ներառյալ ԱԱՀ), անկախ ներկրողից կամ փոխադրողից ընդունած գազի քանակությունից,

- «Տրանսգազ» և «Գազաբաշխիչ» ՍՊԸ-ները ստացել են համապատասխան գործունեության լիցենզիաներ և դրանց հիման վրա համապատասխան լիցենզավորված գործունեություն են իրականացնում «ՀայՌուսգազարդ» ՓԲԸ-ի երաշխիքով,

- «ՀայՌուսգազարդ» ՓԲԸ-ն համապարտ պարտավորություն է կրում «Տրանսգազ» և «Գազաբաշխիչ» ՍՊԸ-ների կողմից լիցենզիայի պայմանների պահպանման համար՝

առաջարկել «ՀայՌուսգազարդ» ՓԲԸ-ին կնքել համապատասխան պայմանագրեր «Տրանսգազ» ՍՊԸ-ի (բնական գազի փոխադրման գործունեության լիցենզիա ունեցող անձ) և «Գազաբաշխիչ» ՍՊԸ-ի (բնական գազի բաշխման գործունեության լիցենզիա ունեցող անձ) հետ՝ սույն կետում նշված անհրաժեշտ ծախսերն ապահովելու համար:

4. Ուժը կորցրած ճանաչել ՀՀ էներգետիկայի հանձնաժողովի 1997թ. օգոստոսի 8-ի N7 և 1997թ. հոկտեմբերի 24-ի N14 որոշումները:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2000թ. հունվարի 1-ից:

ՀՀ էներգետիկայի հանձնաժողովի
նախագահ՝ Վ. Մովսեսյան